

Խուժմերը փճացած էին, անպատրաստ, անբաւարար ուժերով յարձակումներու երեսէն: Անիկա ատելութիւնը հրաւիրեց իր վրայ կռուի հերոսի մը, որ մեղապարտ ցուցամոլութեամբ մը, կռիւ էր բացեր իրմէ տասն անգամ վեր թշնամի գումարտակի մը դէմ, պատուեր անոր պաշարողական շղթան, վրայ տալով երեք չորրորդը իր մարդոց: Բախումի հերոսին եւ ինտելիգենտին արձագանգեց մինչեւ Կեդրոն, որ նման ամէն կեդրոնի դատապարտեց տկարը, անժողովրդականը, կարճահասակը, իրաւացի հանելով հակառակորդ ամբաստանողը, փորձուած մարտիկ, քան յեղափոխական, անունի եւ հմայքի տէր, բայց խոր ու յիմար ամբարտաւան (այս վերջին երանգը չի տեսնուիր այնքան հեռուէն): Կեդրոնին սաստը առաջին հիսաթափումը չէր անոր: Վասպուրականի պարտութիւնը դեռ չէր սպիացած: Իր նեղսրտութիւնը գինքը ըրաւ ըմբոստ: Բացէ ի բաց ընդդիմացաւ անիկա կռուի մարդոց այդ գերիշխանութեան, որ յեղափոխութեան գործը կը վտանգէր հիմէն: Քննադատեց մեծերը, կիսաստուածները, Կեդրոնը, մինչեւ որ հասարակաց դատաստան մը գինքը նուիրագործեց չարաղէտ բոււի իր պիտակին մէջ: Անոր գոյութիւնը «Սասնոյ սարերում» վտանգ մըն էր հասարակաց: Հրաւիրուեցաւ հեռանալ ինքնաբերաբար, եթէ կը սիրէր իր ժողովուրդը, որ, իր դժբախտութեան մէջ, գինքը չարչարող ազդակները միշտ ախորժած է իր մէջ կարծելէ ու փնտռած քառութեան նոխազներ: Հեռանալ լեռներէ: Անոր տաղանդին յարմար էր դաշտը, քաղաքը, ուր գեղեցիկ լեզուն կարող էր «ժիր» գործ տեսնել, երիտասարդները խանդավառելով սուրբ գործով:

Ընկեր Մաթիկը եկաւ դաշտի քաղաքը, քարոզելու յեղափոխութեան անմահ գաղափարները: Մուշի մէջ կրկնուեցան, բայց ոչ նոյն խորութեամբ, շատերը այն տեսարաններուն, որոնք գինքը զգուեցուցած էին Վասպուրականէն: Հոս, իմաստակութեան եւ աշագուծի դատարակին պաշտամունքին փոխարէն՝ անիկա գործ ու-